որը մի թամքոցով անջատվում է շերտի դեպի հյուսիս լայնացող զանգվածից. կառուցված են հոյակապ ամրություններ՝ կազմելով մի անընդհատ գիծ անհարթ հրապարակի արևմտյան և հյուսիսային կողմերով, որտեղով թշնամին կկարողանար ելնել և մտնել քարաբլրի գագաթը։ Այդ պարիսպներին համապատասխանող և բերդի օղակը արևելքից լրացնող գիծը գրեթե չի ամրացված արհեստական կառուցումներով։ Այդ կողմից քարաբլուրը ուղղաձիգ գահավիժում է վար, դեպի լեռնային գետակի խորացրած ձորը, ելնելու համար ոտնատեղ չթողնելով. միայն այնտեղ, որտեղ քերծերի գլխին ցից-ցից ատամների միջև մնում են արանքներ, այդ արանքները լցված են մասնակի պարիսպներով և ետևից՝ հող ու քարով։

Բաղաբերդի պարիսպները շարված են ամուր կրաշաղախով միազանգված, արտաքուստ կոպիտ տաշած քարերով, առանց շարք-շարք դասավորության. երեսը նույն ամուր շաղախով սվաղված է և այդպիսով վեր մագլցելը անհնարին է դարձած։ Պարիսպների տակը, ներսից, բոլոր փոսերն ու խորդուբորդ տեղերը լցված են հողով և քարով, պաշտպանվողներին իրար հետ հարաբերություն պահպանելու և արագ մի տեղից մյուսը անցնելու դյուրություն ընձեռելու համար։ Աշտարակները կանոնավոր կիսաշրջաններով բավական առաջ են քաշված պարիսպների ընդհանուր գծից։ Հյուսիսային պատի մեջ այժմ եղած բացվածքը եղել է բերդի միակ մուտքը։

Պարիսպներով ընդգրկած հրապարակի վրա շենքերի հետքերը ծածկվել են դարերի ընթացքում հողի հաստ շերտով։ Այս ու այնտեղ շտապ կիտված են քարակույտեր, որոնք սակայն նոր իրադարձությունների գործ են և ծառայել են որպես դիրքեր թուրք ազգաբնակության համար դաշնակցության կառավարության շարաբաստիկ տարիներին։ Պարիսպների վրա երևում են ռմբակոծության հետքեր, որին այդ դիրքերը ենթարկվելիս են եղել գիմացի լեռան գագաթին՝ դաշնակցության այս կողմերում լիազոր և ռազմական ուժերի առաջնորդ կարգված Նժդեհի կանգնեցրած թնդանոթից։

Բաղաբերդը այն աստիճան անառիկ էր համարվում, որ սելջուկյան իշխանների վերջին վճռական հարձակման ժամանակ 1170 թ. այստեղ էին տեղափոխված գավառի բոլոր վանքերից, նաև Տաթևից, բոլոր ձեռագրերը, սպասները, հարստությունները, ոսկեղենը, արծաթեղենն ու թանկագին մանվածքները[36]։

Բաղաբերդի բարձրադիր ամրությունները պաշտպանում էին ոչ միայն այդ ձորերի Զորքի խորքերը, այլև այն կարևոր ճանապարհը, որը պատմական Արևիքի՝ Մեղրու շրջանի միջով գալով Ուրմիո լճի ավազանից—Թավրիզից փոխադրվում էր Դիբագլուի լեռնանցքով Արեգունու կամ Զավնդուրի-Մեղրու-Գյունեյի լեռնաբազուկով Բաղք և միանալով այժմյան Ողջի (Օխչի) գյուղի Փիրդուդան սրբավայրի մոտ Կապուտջուղի (Կապուտջիղի) լեռնանցքով արևմուտքից՝ Գողթնից, այն է Ագուլիսի և Օրդուբադի կողմերից եկող ճանապարհի հետ՝ մի փոքր տարածություն ընթանում էր Ողջի (Օխչի) գետի հոսանքով վար, տեղափոխվում էր նրա ձախակողմյան օժանդակ Գեղվա գետի բերանի վրայով և Բաղաբերդի տակով ուղղվում էր հյուսիս։ Գեղվա գետի բերանին պահպանվել է բավական խանդարված վիճակի մեջ գեղեցիկ հին կամուրջը, որով այսօր էլ օգտվում են երթևեկողները։ Ճանապարհը շարունակվում

[36] Օրբելեան Ստ., գլ. ԿԱ, էջ 336։